

**««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ**

ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 19.4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19.4 Ընդերքօգտագործման իրավունքի, ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը.

- | | |
|---|-------------------------------|
| 1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տոննա |
| 2) վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | 10000-ապատիկ
բազային տոննա |
| 3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | 50-ապատիկ
բազային տոննա |
| 4) գունագեղ քարերի, բացառությամբ վանակատի (օբսիդիանի), յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | բազային տոննա |
| 4.1. Վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան | 10000-ապատիկ
բազային տոննա |
| 5) մետաղագործական, քիմիական, թեթև | 100-ապատիկ
բազային տոննա |

և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան 6) հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝	10000-ապատիկ
- արդյունաբերական (շշալցման) նպատակով իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոկոս 5000-ապատիկ
- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոկոս 500-ապատիկ
-բուժական (ռեկրեացիոն) նպատակներով արդյունահանման իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոկոս 500-ապատիկ
-մեկից ավելի արդյունահանման նպատակ ունեցող հանքային ջրի արդյունահանման իրավունքի տրամադրման համար	արդյունահանման նպատակները սահմանված հանրագումար
7) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար՝ ֆիզիկական անձանցից	բազային տոկոս
իրավաբանական անձանցից	բազային տոկոս
8) (կետն ուժը կորցրել է 23.06.15 ՀՕ-112-Ն)	10-ապատիկ
9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոկոս չափով
9.1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրման համար (2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում ներկայացված դիմումատուների դեպքում)՝ տարեկան	բազային տոկոս
10) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով միանգամյա իրավունքի տրամադրման համար՝ տարեկան	բազային տոկոս 100-ապատիկ
11) կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ	

մետաղական օգտակար հանածոյի հանույթի իրավունքի տրամադրման համար՝ տարեկան

բազային տոն
չափով

12) Մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝

13) Ոչ մետաղական օգտակար հանածոյի պաշարների հաշվետվության ընդերքաբանական փորձաքննության համար՝

բազային տոն
չափով

բազային տոն
չափով»

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 206-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 206.

**Ստորերկրյա հանքային ջրերի և աղի
արդյունահանման համար
բնօգտագործման վճարի
դրույքաչափերը**

1. Ստորերկրյա հանքային ջրի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է բնօգտագործման վճարի բազայի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով (հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ մասի դրույթները)։

Հանքային ջրի արդյունահանման նպատակը (նշանակությունը)	Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակ արդյունահանված յուրաքանչյուր խմբի մետրի համար (դրամ)
Արդյունաբերական (շշալցման) նպատակով	5650
Արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով	230
Բուժական նպատակով, այդ թվում՝ ա. բալնոթեթման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմեքսում, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար՝	300
բ. ըմպելասրահներում օգտագործման համար՝	40
գ. ռեկրեացիոն (այդ թվում՝ հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով	75

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Բ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.3 մասում «բովանդակությանը» բառից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող նյութերին կից չի ներկայացվել ընդերքաբանական փորձաքննության համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի անդորրագիրը,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: